

ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

ՀԱՅ ԳՐԱԴՆԵՐԻ ԸՆԴԵՐՈՒԹԻՒՆԸ.

Մի քանի ամիս առաջ պաշտօնապէս հաստատուեց Հայ դրոյների ընկերութեան կանոնադրութիւնը: Այդ ընկերութեան անդամագրուել կարող են գեղեցիկ և զիտական գրականութեան և մամուլի ներկայացուցիչները առանց խտրութեան:

Հայ գրողների ընկերութեան կազմակերպման յաջողութիւնը մի շատ ուրախալի երևոյթ է: Ներկայ դարում բոլոր նոյն պրաֆեսեային պատկանող անհատները կազմակերպում են և կազմում են անկախ ընկերութիւններ, որպէս զի այդ եղանակով կարողանան աւելի լաւ պաշտպանել իրենց մտաւոր և տնտեսական շահերը: «Արարատում» առիթ ենք ունեցել դպրոցական—ուսուցչական կազմակերպութիւնների մասին խօսելիս այն միտքը արծարծելու, որ մի դասակարգ մինչև չհասնէ անկախ շահեր ունենալու և այդ հիմքի վրայ կազմակերպուելու գիտակցութեանը: մինչև այդ դասակարգը ինքը ձայն չհանէ և լսելի չդառնայ ներկայ սոցիալական կեանքի բազմակերպ շահերի պայքարումներին լսող և այդ ցանկութիւններին օրինական ձեւակերպումներ տուող հաստատութիւններին, նա կմնայ անլսելի և կհամարուի ամենից արհամարհուած դասակարգը: Դասակարգների դարգացման պատմութիւնը այդ է ցոյց տալիս:

19-րդ դարում երբ կեանքի և ապրուստի պայմանները աւելի դժուարացան, երբ կեանքը վայելելու հաճոյքը աւելի արմատաւորուեց մարդու մէջ և դոյութեան կոիւր աւելի սաստիկ, մեծ ուժեր սպառող դարձաւ, շահակից անհատները իրար աւելի մօտ սզմուեցին, աւելի

սերտ շարքեր կազմեցին, որպէս զի կեանքի պայքարի մէջ իրենք ամենից զրկուածները չմնան: Այս տեսակէտից հայ զրոյնների ընկերութիւնը ժամանակակից մի երեւոյթ է: Նա այսքան ուշ յառաջացաւ, որովհետեւ արտաքին պայմանները մինչև վերջերս աննպաստ էին նորա համար, կամ գուցէ պատճառը այն էր, որ մեր գրականագէտների ուրոյն դաս լինելու գիտակցութիւնը թոյլ է եղել մինչև վերջերս, կամ աւելի ճիշտ՝ բացակայել են այդ զործի համար կազմակերպող ձեռքեր:

Այսպէս թէ այնպէս այժմ կազմակերպուել և զործի է անցել մի շատ համակրելի ընկերութիւն, որը ունի

§ 1. Հետևեալ նպատակներն.

ա. իր անդամների նիւթական դրութեան բարւոքումը.

բ. Նրանց մտաւոր, բարոյական և գեղարուեստական դարգացման նպաստելը. և

գ. նիւթական փոխադարձ օգնութիւն:

§ 2. Յիշեալ նպատակներին հասնելու համար ընկերութիւնն իրաւունք ունի՝

ա. վարձել յարմար բնակարաններ, ձեռք բերել շարժական և անշարժ կայքեր իբրև սեպհականութիւն, այլև գիտնական, գրական և գեղարուեստական երկերի հեղինակի իրաւունք և սեպհականացնել:

բ. կազմակերպել ժողովներ, ներգործող օրէնսդրութիւնների պահպանութեամբ, քննելու ինչպէս յատուկ, այնպէս էլ ընդհանուր խնդիրներ՝ որոնք շօշափում են հայ զրոյնների շահերը:

գ. Պատշաճաւոր թոյլտուութեամբ բաց անել 1, բիւրօ իրաւական և բժշկական օգնութիւն հասցնելու, 2, տեղեկատու բիւրօ ընկերութեան անդորձ անդամների համար աշխատանք գտնելու:

դ. Քննել իր անդամների կենցաղավարութիւնը, աշխատանքի պայմանները և կարիքները:

ե. կազմակերպել հաշտարար միջնորդ դատարաններ փոխադարձ համաձայնութեամբ քննելու հրատարակիչների (և այն խմբագիրների, որոնք ունեն չհրատարակչական շահեր) և զրոյնների միջև ծագած թիւրիմացութիւնները:

զ. Պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութեամբ հրաւիրել համաժողովներ, խորհրդակցութիւններ, թոշակներ հիմնել դպրոցական հաստատութիւններում, մրցանակ յայտարարել գիտական, գրական և գեղարուեստական երկերի համար:

է. Հիմնել յատուկ գրական ֆոնդ ընկերութեան անդամներին և նրանց ընտանիքներին միանուագ և մշտական նպատարածանկելու, ինչպէս օժանդակութիւն կամ փոխառութիւն հետեւեալ դէպքերում. ա) հիւանդութեան, ծերութեան և ծայրայեղ կարիքի ժամանակ և բ) գիտական, գրական և գեղարուեստական կիսատ երկերն աւարտելու:

§ 3. Ընկերութիւնը, իր անդամների մասաւոր բարոյական և գեղարուեստական դարգացման նպատակով համար, պատշաճաւոր թոյլտուութեամբ և այս առարկայի համար ներգործող օրէնսդրութիւններով սահմանուած կանոնների պահպանութեամբ:

ա. Կազմակերպում է մատենադարաններ, ընթերցարաններ, հասարակական դասախօսութիւններ, գիտական արշաւանքներ, համերգներ, ներկայացումներ, ընթերցումներ, դասընթացներ և գրուցատրութիւններ հանրակրթական և կեանքի այնպիսի ընթացիկ խնդիրներ պարզարանելու համար, որոնք շօշափում են գրողների շահերը:

և բ. Հրատարակում է իր թերթը, այս առարկայի համար ներգործող օրէնսդրութիւններով սահմանուած կանոնների պահպանութեամբ:

Այս բոլորից պարզ երևում է, թէ ընկերութիւնը իր առաջ գործունէութեան որպիսի լայն ասպարէզ ունի: Հայ գրականագէտը յարմարութիւն ունի իր գեղարուեստական ճաշակը, միտքը զարգացնել իր ընկերակիցների շրջանում: Իր հոգուն, մտքին և զգացումներին մօտ անհատների շրջանում հնարաւորութիւն ունի շփուելու: Հոգեկան գրգիռներ ստանալու: Մտքի սրութեան և գործունէութեան, զգացումների մշակման, հոգու անդորրացման, սոցիալական բնազդների մշակման համար աւելի լաւ կազմակերպութիւն և ձեւ գտուար է մտածել: Հոգեկան առաւելութիւնների հետ միացած է նաև անտեսական օգնութիւնը, ընկերութիւնը փոխադարձ օգնութեան է դալիս իր անդամներին, բարւոքում է իր անդամների նիւթական գրութիւնը, պաշտպանում է յարմար դէպքերում իր անդամների շահերը անիրաւացի շահագործումներից: Հայ գրականագէտը և նրա ընտանիքը կարող են յոյս ունենալ, որ անտեսապէս լքուած գրութեան ժամանակ այս կամ այն կողմ մուրալու չեն զնալ, այլ կլիմեն իրենց «ընկերու-

Թեան» նեղ դրութիւնից մասամբ դուրս գալու համար: Գոնէ նեղ օրերին օգնութեան վայր ունենալու զիտակցու-
նը հողին բարձրացնող մի հանգամանք է, որը հայ գրա-
կանագէտը պէտք է գոնէ փոքր չափերով ունենայ:

Գրողների նոր ընկերութիւնը չի կարող մօտիկ ապա-
հայում իր առաջ դրուած բոլոր նպատակները միանգա-
մից իրականացնել, սակայն կասկածից դուրս է, որ նա
ժամանակի ընթացքում մեր հայ կեանքի մէջ աւելի ու-
ժեղ արմատներ բռնելուց յետոյ՝ կրկարողանայ աւելի լայն
ծրագրով և բազմակողմանի գործել, քան այժմ: Նա բըղ-
խում է կեանքի կարիքից, հիմնւում է հասարակական
լայն խաւերի համակրանքի վրայ, ուստի և այդ ընկերու-
թեան ապագայի մասին յոռեաեւս լինելու առանձին ա-
ռիթներ չկան:

Կար ժամանակ, որ հմանք կարծում էին, որ հայ
գրականագէտներին տպահովելու խնդիրը պէտք է կապել
տառերի և տպագրութեան զիւտերի յօրեւաններին հետ:
Հասարակութիւնը իր լուծան պէտք է տար այն ֆոնդի
համար, որի տոկոսներով իրականացուելու էին մօտաւո-
րապէս այն նպատակները, որ ունի նոր կեանք առանց
այս ընկերութիւնը: Ինքն ըստ ինքեան հասարակական լայն
խաւերի մասնակցութիւնը գրողների ծանր կացութիւնը
թեթեւացնելու համար չի կարելի խոտելի համարել: Ոչ
միայն ցանկալի, այլ և անհրաժեշտ է, որ հասարակութիւնը
տպահովէ իր մայրենի գրականութեան աշխատակիցներին:
Սակայն այդ օգնութիւնից առաջ նախ պէտք է հայ գրող-
ները խմբուէին մի ընկերութեան շուրջը, որով հասարա-
կութեանը պաշտօնապէս յայտարարուէր, որ գրողները ի-
րենց սեփական ջանքերով ցանկանում են թեթեւացնել
մասամբ իրենց տնտեսական ծանր վիճակը: Գրողները պէտք
է պարզելին հասարակութեան, որ իրենց էսթետիկական,
մտաւոր, բարոյական դաստիարակութեան, դարգացման
համար համախմբուել են և գործնական միջոցներ ձեռք
առել, նրանք պէտք է հանդէս դալին իրրեւ առանձին կազ-
մակերպուած և պաշտօնապէս ճանաչուած մի հաստատու-

Թեան մասնիկներ: Մեր ներկայ դարը ցրուածութիւն չի սիրում: նա սիրում է որ երեւոյթները, նոյն իսկ հասարակականը, կոնկրետացած ձևերի մէջ հանդէս գան: Առաջին փորձը, քայլը ինքնօրնութիւնը պէտք է լինի. բարեգործութիւնները, նպաստները իդէալական գործերի հիմքը չպէտք է կազմեն: Երբ Բարեգործական ընկերութիւնը ձեռնարկեց «Ուսուցչական-գարնոցական Ֆոնդի» կազմակերպութեանը, ուսուցչական շրջաններից գծող հոգիները ձայներ լսուեցին, թէ իրենք չեն ցանկանում, որ Թոշակարկղի և նպաստների գործ կապուէ բարեգործական հաստատութեան հետ^{*)}: Նրանք ցանկանում էին իրենց ապահովութեան գործը կապուէ աւելի պաշտօնական հաստատութեան հետ, ուր և ժողովուեն նաև իրենց կողմից պարբերաբար տրուած նպաստները: Ահա այսպիսի ձևակերպման պէտք է եւթադրուէր նաև հայ գրականագէտների ապահովութեան գործը: Գրողների պաշտօնական ընկերութիւնից զատ մի այլ հաստատութիւն չկար, որի հետ կապուէր այս խնդիրը: Եւ ահա մինչև յօրելեանական հանդէսների հետ կապուելիք Ֆոնդը գլուխ կգար: հայ գրողները կազմակերպուեցին, որ պարզ երեսով մօտենան հասարակական օգնութեան: Անկախ չէր երբէք, որ գրողները կազմակերպուէին գրական Ֆոնդի յաջողութիւնից յետոյ: Այս տեսակէտից նայելով շատ ուրախալի է, որ տեղին և ժամանակին հանդէս եկաւ հայ գրողների ընկերութիւնը:

Ուրախալի երեւոյթներից մէկն էլ այն է, որ ընկերութեան կազմակերպիչները գրողներ ասելով հասկացել են առհասարակ գրականութեան բոլոր ճիւղերում աշխատողներին, գիտնականներին, գեղեցիկ գրականութեան և մամուլի ներկայացուցիչներին: Մեր գրողներից շատերը գրականութիւն ասելով կարծէք միմիայն գեղեցիկ գրականութիւնն են հասկանում: զա նախ սխալ է ի հարկէ, որով-

^{*)} Տես այս թուականի «Արարատի» №2-ի իմ «Գարնոցական-ուսուցչական Ֆոնդ» յօդուածը:

հետև մի ազգի պարծանքը միայն գեղեցիկը չէ կազմում, այլ նաև գիտական իմացութիւնը և հրապարակախօսութիւնը: Դրանց հաւասարարժէքի մասին վէճերը քիչ պէտք է լինեն: Նոր ընկերութիւնը խնդիրը այդպէս էլ ըմբռնել է. նրա անդամները գրականութեան բոլոր ճիւղերիցն են: Ի հարկէ հնարաւոր է միայն գեղեցիկ գրականութեան կամ միայն գիտական գրականութեան ընկերութիւններ կազմել, սակայն դա մեր կեանքի համար շոշափութիւն է, մեր գրականութեան մասերը այնքան զարգացած չեն, որպէս զի ամեն մի մասից մի անկախ ընկերութեան կազմակերպումը հնարաւոր լինի: Բացի այդ ճիւղաւորումները շատ էլ ցանկալի բան չէ. աւելի լաւ է երբեմն զանազան ճիւղերի գրողներ միասին համախմբուեն, որպէս զի փոխադարձ յարաբերութեանը և փոխազդեցութեան միջոցաւ մասնազիտական նեղմտութիւնը և միակողմանութիւնը մասամբ վերանայ կարողանայ:

Խորն համակրանքով վերաբերուելով դէպի այս նոր ընկերութիւնը, չէի ցանկանալ սակայն իմի դիտողութիւն շանել ընկերութեանը անդամագրուելու հարցի մասին: Ընկերութեան անդամների ընտրութեան մասին խօսում է կանոնագրութեան § 4. ուր գրուած է. «Ընկերութեան անդամների թիւը սահմանափակուած չէ և սեռի մէջ խտրութիւն չէ գրուում: անդամները ընդունւում են ընդհանուր ժողովից գաղտնի քուէարկութեամբ»:

Նոր անդամ ընդունւելու ձևը շատ պարզ է և առանձին առարկելու բան չկայ նորա դէմ: Նոյեմբերի 27-ին երկրորդ ընդհանուր ժողովին ընդունւում է այն բանաձևը, ըստ որի ընկերութեանը անդամագրուողները չպէտք է անպատճառ պրոֆեսիոնալ զբոյ, գիտնական կամ լրագրող լինեն: Մեր կեանքի համար այս լրացուցիչ բացատրութիւնը միանգամայն հասկանալի է. պրոֆեսիոնալ գրողներ, գիտնականներ մեր մէջ շատ քիչ կան, եթէ ընկերութեան անդամները միմիայն դրանք լինէին, հաւանական է ընկերութեան անդամների թիւը մէկ կամ երկու տասնեակի հազիւ հասնէր: Մեր գրողների մեծագոյն մասի տնտե-

սական ապահովութեան հիմքը դուրս է գրականութիւնից, մեր կեանքը չի կարողանում զուտ գրականութեամբ զրադուող անհատներին ապահովել:

Այս լրացուցիչ կէտը ընդունուելուց յետոյ ժողովը ընդունում է այդ բանաձեւի երկրորդ մասը. «Գալով այն խնդրին, թէ ինչ կրիտէրիում պէտք է ընդունել ընկերութեան անդամագրուել ցանկացող որեւէ մարդու՝ համաձայն կանոնադրութեան առաջին կէտի՝ «գրող», «գիտնական» կամ «լրագրող» ճանաչելու համար՝ ժողովը գտնում է, որ այդ պէտք է թողնել իւրաքանչիւր ընտրողի խղճին ու անձնական հայեցողութեանը»:

Կարծում եմ, խնդիրը այստեղ շատ լայն է ընդունուել, կարծէք օրյեկտիւ կրիտէրիում չկայ դնահատելու, կարծէք մէկին զրոյ կամ ոչ զրոյ անուանելու չափանիշներ չկան: Ամեն բան անհատական խղճին թողնելը մի միջոց է ամեն մէկին ընկերութեան մէջ ներս թողնելու, ինչպէս և պրակտիկան շատ ճիշտ այդ բանը հաստատեց:

Այն անհատը, որը ցանկանում է մտնել այդ ընկերութեան մէջ պէտք է մի փոքր աւելի բեղմնաւոր եղած լինի զրականութեան համար: Իսկ այդ տեսակէտից նայելով կարելի է վիճել այս կամ այն անհատի գրական գործունէութեան մասին: Ընդունելուց առաջ պէտք է խնդրատուի մասին լուրջ քննութիւն տեղի ունենայ և երբ նա դիմանայ քննադատութեան և նա շահէ անդամների ձայների մեծամասնութիւնը, այն դէպքում միայն նրա մուտքը դէպի ընկերութիւնը բաց է:

Երբ լուրջ կրիտիկայից յետոյ ընտրուեն ընկերութեան անդամները, այն դէպքում այդ ընկերութեան անդամ ընտրուելը կլինի ընտրուողի համար զրոյ կոչուելու զիտակցութեան ճիշտ սկիզբն: Ականակը պէտք է ոգևորուէ այն մտքով, որ իր բեղմնաւոր աշխատանքից յետոյ միայն պէտք է իր «վարպետներն» շրջանը անցնի: Սա արխատրական տեսակէտ չէ, այլ կրթական նշանակութիւն ունեցող հանգամանք: Աշակերտը պէտք է աշակերտութիւն անէ, տընէ, աշխատէ, որպէս զի գպրոցը աւարտէ: Ականակ

հեղինակը այն ժամանակ զրական դպրոցը կաւարտէ, երբ զրոյնների ընկերութիւնը նրան իր պաշտօնական կազմակերպութեան մէջ ընդունէ: Մեր կարծիքով զրոյնների շրջանում լինել, նրանց հաւաքումներից օգտուել ամեն մէկին, նոյն խոսքով զրականագէտին կարելի է, սակայն պաշտօնական անդամ լինելու համար տւելի ջանք ու ճիգ է հարկաւոր: Քան այժմ՝ ենթադրւում է ընկերութեան ղեկավարների կողմից: Հասարակութիւնը ինքը բնագոգօրէն սրտն կամ նրան զրականագէտ է հաշւում և մեծ մասամբ իրաւացիօրէն, որովհետեւ ուր գործ կայ, ուր աշխատանքի արդիւնքներ, այնտեղ ստեղծողին գնահատելը դժուար չէ: Անհատների հետաքրքրութեան, վարդապետան, հասարակական որոշ գիւրքի մօտութիւնը պէտք է լինի ամեն մի կազմակերպութեան հիմքը, հիմնական նմանութիւն պէտք է լինի աշխատանքի ձևերի և հետևանքների մէջ: Ամեն մի զրիչ վերցնող, ամեն մի սովորական թղթակցութիւն զրոյ չի կորոզ և չպէտք է «գրող» համարուէ: Պատահական տիպերը տեղ չունին զրոյնների ընկերութեան մէջ: Գոնէ հասարակական պարզ գնահատման զիտակցութիւնը պէտք է ղեկավարող լինէր ընտրութիւնների ժամանակ: Եթէ հարցը սյուսէս պրուէր, ճիշտ է, ընկերութիւնը կզրկուէր մի քանի տասնեակ անդամներից, սակայն զրանից ընկերութիւնը ոչինչ չէր կորցնիլ:

Եթէ այս տեսակէտը կիրառման ենթարկուէր, այն դէպքում հազիւ թէ բնդհանուր ժողովի կողմից «զրոյներ» համարուէին հետեւեալ անձնաւորութիւնները՝ Մ. Ահարամանեան, Բ. Թեօքմէջեան, Երզնկեան սարկաւազ, Բ. Նահապետեան, Հ. Տէր-Առաքէլեան, Մ. Տէր-Ուրուսեան, Մարտո, և շատ ուրիշները: Դրանց մէջ կարող են տաղանդներ թաղնուած լինել, սակայն թաղ բացուին, որպէս զի այնուհետեւ «գրողի» տիտղոսը ստանան: Դրանց զրոյ լինելու ապացոյցները հաւանականաբար օրաթերթերի «ներքին լուրեր» կամ «նամակներ դաւառից» բաժիններում պէտք է խորին ուշադրութեամբ որոնել: Դաւառական թղթակցին ևս կարելի է զրոյ անուանել, եթէ նա

տարիների ընթացքում կամ իր առանձին շնորքի շնորհիւ իր վրայ է դրաւել հասարակութեան ուշադրութիւնը:

Գործը այսպէս է սկսուել, ուղղելը դժուար է. ապազայում նոր և մի փոքր խիստ տեսակէտներով մօտենալ անդամների ընտրութեանը անյարմար է, որովհետեւ ընկերութեան մէջ շատերն են մօել, որոնք խկապէս «գրող» կոչմանը դեռ արժանի չեն:

Խնդրի այս ձեւակերպումը սակայն չպէտք է սառեցնէ հասարակութեան կամ հեղինակաւոր գրողներին ընկերութիւնից: Այդ ընկերութիւնը նեղսիրտ վերաբերմունքի առիթ չպէտք է դառնայ, ընդհակառակն նորահաստատ ընկերութեան հարկաւոր է ուժ տալ որ նա զօրանայ: Հասարակութեան անկեղծ սիրոյ և համակրանքի վրայ պէտք է ծաղկէ հայ զրական մշակների ընկերութիւնը: Տարակարծիք չլինել, բայց և ուժ տալ զովելի գործին:

ԳՈՒՐԳԷՆ ԷՊԻԼԱՆ